# ՈՉ ԱԿՏԻՎԱՑԱԾ ԻՆՖԼՈՒԷՆԶԱՅԻ ՊԱՏՎԱՍՏ

## ԻՆՉ ՊԷՏՔ Է ԻՄԱՆԱՔ?

# 2004-2005

## 1 Ինչու պէտք է պատվաստել?

**Ինֆլուէնզան (Ֆլու) լուրջ հիվանդութիւն է:**
Նրա վիրուսը տարածւում է հիվանդի քթի և կոկորդի բորբոքւած ճամբով:
Ինֆլուէնզան կարող է պատճառել...

. ջերմութիւն . կոկորդի ցաւ . դող
. հազ . գլխացաւ. . մկանային ցաւեր

Ամեն անհատ ենթակայ է վարակւելու Ինֆլուէնզայով, որոշ մարդկանց մօտ տևում է այն միայն մի քանի օր, բայց ոմանց մօտ շատ լուրջ և հաւանաբար ենթարկելու հիվանդանոցային խնամքի: Ինֆլուէնզան ունի տարեկան հազարաւոր մահկանացուներ, գլխաւորապէս տարեցների շրջանում:

**Ինֆլուէնզայի պատվաստը կարող է կանխել Ինֆլուէնզան:**

## 2 Ինֆլուէնզայի պատվաստը

Ներկայում երկու տեսակ Ֆլույի պատվաստ ուժի մէջ են:
Ոչ ակտիվացած (սպանւած) Ֆլուի պատվաստ , որը սրսկւում է, այն գործադրւել է ՄիացեալՆահանգներւում տարիներ շարունակ: Ակտուալ, տկարացած պատվաստը արտոնագրւել է 2003-ին: Այն գործածւում է որպէս ջրափոշի քթածակերի մէջ:

Ինֆլուէնզայի վիրուսը յաճախ ենթարկւում է փոփոխութեան, այդ պատճառով էլ այն օրւայ ձևակերպում է ստանում ամեն տարի:

Պաշտպանութեան աճումը տևում է 2 շաբաթ պատվաստը ստանալուց յետոյ և ազդեցութիւնը համարեայ մեկ տարի:

Որոշ մարդիկ որ ստանում են Ֆլուի պատվաստը հաւանաբար վարակւած դէպքում շատ աւելի թեթևակի պիտի անցկացնեն այդ շրջանը քան նրանք ովքեր բոլորովին չեն ստացել պատվաստը:

Ֆլուի պատվաստը կարող է տրւել այլ պատվաստների հետ միաժամանակ ինչպէս և Նմօնեայի պատվաստի հետ:

Որոշ ոչ ակտիվացած Ֆլուի պատվաստ պարունակում է Թայմըրօսալ, սնդիկի որոշ տեսակ, որպես նախապաշտպանութիւն, և որոշները միայն մի չնչին չափ Թայմըրօսալ: Ոչ մի գիտական փաստ չկայ որ եղած Թայմըրօսալը պատվաստի մէջ վնասակարէ, իմանալ Թայմարօսալի գերակշռութեան և ռիսկի հնարաւորութիւնների մասին ձեր օգտին է: Եթէ ունէք որևէ հարց այս խնդրում, հարցրէք ձեր բժիշկին:

## 3 Ովքեր պէտք է ստանան Ինֆլուէնզայի պատվաստը?

**Անձիք 6 ամսականից վեր և տարեցներ որոնք ունեն առողջութեան աւելի լուրջ և բարդ կացութիւն, և նրանք ովքեր որ մօտ կապակցութեան մէջ են նրանց հետ (Գումարած ընտանիքի անդամները)** պէտք է ստանան սոյն պատվաստը:

Ինֆլուէնզայի պատվաստը հանձնարարւում է հետևեալ խմբերին:

. **Բոլոր երեխաներին** 6-23 ամսական

. **Ընտանիքի անդամներ որոնք դրսում զբաղւած են** 6 ամսականից ցածր և անչափահաս մանուկների խնամակալութեամբ:

. Բոլոր **50 տտարեկան և վեր անձերը:**

. Բլոր նրանք որ **ապրում են երկարատև հսկողութեան կենդրոններում,** ունենալով ծանր ու հարատև հիվանդութիւններ:

. Յետևեալ **առողջական վիճակներից** տառապողները:
-Սրտի հիվանդութիւն -Երիկամունքի հիվանդութիւն
-Թոքերի հիվանդութիւն -Շաքարախտ
-Ազմա -Անեմեա,կամ օտար արեան բարդութիւններ:

. Նրանք ովքեր **ունեն թոյլ վարակամերժ վիճակ:**

- HIV/AIDS կամ այլ հիվանդութիւն որը ազդում է վարակամերժ դրութեան վրայ:
- Երկարատև բուժումներ ազդեցիկ դեղամիջցներով ինչպիսին են ստերոիդները:
- Քաղցկեղ ունեցող անձիք որոնք բուժւում են R-ճառագայթներով կամ դեղամիջցներով:

. 6 ամսական մինչև 18 տարեկան անձիք որոնք **տևական Ասփիրին կառնեն** (եթէ Ինֆլուէնզայով վարակւեն կարող են ստանալ Reye Syndrome):

. Տիկնայք որ **յղութեան շրջանում** են լինելու Ֆլուի ժամանակաշրջանում:

. Բժիշկներ, բոյժքոյրեր, ընտանիքի անդամներ, կամ նրանք ովքեր շփման նէջ են այն հիվանդների հետ որոնք պէտք ունեն պատվաստման:

. Անհատ որ ցանկանում է նվազացնել Ինֆլուէնզայի վարակւելու առիթը:

Ֆլուի պատվաստը *խրախուսելի* է նաև նրանց:

. Որոնք յատուկ խնամք են մատակարարում շրջանային կենդրոններում:

. Ովքեր ճամբորդութիւն ունեն հարավային կիսագունդ Ապրիլ և Սեպտեմբեր ամիսների ընթացքին, կամ էլ արևադարձային գօտիներ և կամ որոշւած թուրիստային խմբերի հետ որևէ ժամանակ:

. Ովքեր ապրում են խմբային կենդրոններումկամ օտար խճողումների հետ կանխելու հիվանդութիւնների ընդվզումները :

## 4 Երբ պէտք է ստանամ Ինֆլուէնզայի պատվաստը?

Ամենից լաւ ժամանակաշրջանը Ֆլույի պատվաստը ստանալու համար Հոկտեմբեր կամ Նոյեմբեր ամիսներն են:

Որոշ անձիք պէտք է սկսեն իրենց պատվաստումը Հոկտեմբեր ամսին կամ աւելի շուտ: Գումարած ներառեալ մարդիք:
**-Բոլոր 50 տարեկան և վեր անձերը:**
-Երիտասարդներ, որոնք **ենթակայ են Ֆլույի և նրա բարդութիւնների** վտանգին (գումարած **6-ից մինչև 23 ամսական երեխաներ**)
-**Ընտանիքի անդամներ** որոնք մօտից աշխատում են նման խմբերի հետ
**-Առողջապահական գործունեաներ**
-**9 տարեկանից ցածր երեխաներ** որ ստանում են Ֆլույի պատվաստը առաջին անգամ

Ինֆլուէնզան հաւանական է իր բարձրագոյն աստիճանին հասնել Յունուար-Մարտ ամիսների ընթացքին, բայց առհասարակ իր բարձրագոյն աստիճանին է հասնում Փետրուար ամսին: Պատվաստուել Դեկտեմբեր ամսին կամ միքիչ էլ ուշ, աւելի շահաւէտ է ամբողջ տարւայ համար:

Մեծամասնութիւնը կարիք ունեն միայն մէկ պատվաստի ամեն տարի, որպէսզի կանխեն Ինֆլուէնզան: **9 տարեկանից ցածր երեխաներ որոնք առաջին անգամ են ստանում Ֆլույի պատվաստը** կարիգ ունեն 2 սրսկումի: Երկրորդ պատվաստը պէտք է ստանան մէկ ամիս տարբերութեամբ: Այն երեխաները որոնք ստացել են սոյն պատվաստը անցեալ տարւայ ընթացքին թեկուզ լինելով առաջին անգամ այս տարի կարիքն ունեն միայն մէկ պատվաստի:

## 5 Որոշ անձիք նախքան պատվաստ ստանալն պէտք է կապւեն և խօսել որևէ բժիշկի հետ

Խօսէք բժիշկի հետ նախքան Ֆլույի պատվաստ ստանալն:

1) Երբևիցէ ալերգիա ունեցել էք հաւկիթի և կամ նախկին Ֆլուիյի պատվաստը ստանալու ժամանակ, կամ

2) Որևէ բժշկական խնդիր ունէք կամ ունեցել էք **Guillain-Barre`(GBS)** անցեալում:

Եթէ տաքութիւն ունէք կամ լուրջ հիվանդ էք պատվաստի պայմանաւորւած օրում, ընդհանրապէս պէտք է սպասէք մինչև ապաքինում, նախքան Ինֆլուէնզա պատվաստ ընդունելը: Խօսէք ձեր բժիշկի կամ բոյժքոյրի հետ նոր ժամկետ նշանակել պատվաստը ստանալու համար:

## 6 Որոնք են Ինֆլուէնզա պատվաստի վտանգները?

Որևէ պատվաստ, ինչպէս այլ դեղամիջոց, ունակ է պատճառելու լուրջ բարդութիւններ, ինչպիսիք են լուրջ գերզգայնական հակազդեցութիւններ: Ինֆլուէնզայի լուրջ վնաս կամ մահ պատճառելու վտանգը չափազանց փոքր են:

Ոչ ակտիվացած Ֆլուի պատվաստը չունի որևէ լուրջ խնդիրներ: Վիրուսները պատվաստի մէջ սպանւած են, ուրեմն պատվաստ ստանալը պատճառ չէ Ինֆլուէնզայով հիվանդանալու:

**Թեթև բարդութիւններ:**
. Ցաւ, կարմրութիւն և ուռուցք սրսկման վայրում:
. Տաքութիւն
. Ցաւեր
Եթէ այս բարդութիւնները պատահեն, ապա նրանք սկսւում են պատվաստման առաջին օրից և կարող է տևել 1-2 օրեր:

**Սուր բարդութիւններ:**
. Լուրջ գերզգայնական հակազդեցութիւն շատ հազվադէպ: Իսկ եթէ առաջանան, այն կը տևի մի քանի րոպէ մինչև մի քանի ժամ տևողութեան ընթացքում:

. 1976 թւին,Սուվայն Ֆլու պատվաստից յաղորդութիւններ կան Guillain-Barre` Syndrome (GBS) հիվանդութեան մասին, նրանից յետոյ Ինֆլուէնզա պատվաստը մինչ այս ոչ մի կապակցութեան օղակ չի ունեցել(GBS ) ի հետ: Այնուամենայնիվ, եթէ կայ վտանգ Ինֆլուէնզա պատվաստից ստանալ GBS ը (իւրաքանչիւր մէկ միլիոն դեղաչափից 1 կամ 2 դէպք) աւելի քիչ քան Ինֆլուէնզայի վտանգը, որը կարելի է կանխել այն պատվաստումով:

## 7 Ինչ անել մեղմ կամ սուր հակազդեցութեան դէպքերում?

**Ինչին պէտք է ուշադրութիւն դարձնեմ?**
. Որևէ արտասովոր վիճակ,ինչպիսիք են լուրջ գերզգայնական հակազդեցութիւն, բարձր տաքութիւն կամ անսովոր վարվելակերպ, լուրջ գերզգայնական հակազդեցութեան նշաններից են շնչելու դժւարութիւն, խռպոտ ձայն կամ հծծում, մաշկի այրոց, գունատութիւն, թոյլութիւն, սրտի արագ տրոփում, կամ գլխապտոյտ:

**Ինչ պէտք է անեմ?**
. **Հեռաձայնեցէք** բժիշկին, կամ հիվանդին շուտափոյթ կերպով հասցրէք բժիշկի:

. **Յայտնեցէք** ձեր բժիշկին եղելութեան մասին թւականն ու ժամանակը և երբ է տրւել պատվաստը:

. **Պահանջեցէք** ձեր բժիշկից, բոյժքրոջից կամ առողջապահական բաժնից Vaccine Adverse Event Reporting System-ի (VAERS) ձև լրացնել կամ թէ դուք ինքներդ հեռաձայնէք **1-800-822-7967, կամ այցելեցէք ծրագրի Website-ը** հետևեալ հասցէով **http://www.vaers.org.**
*VAERS – ը չի մատակարարում ոչ մի բժշկական խորհուրդ:*

## 8 Ինչպէս կարող եմ իմանալ աւելին ?

. Հարցրէք ձեր բժիշկին կամ բոյժքրոջը: նրանք ձեզ կտան պատվաստների մասին տեղեկատւական գրքոյկի ներդիր, կամ կառաջարկեն տեղեկութեան այլ աղբիւրներ:

. Հեռաձայնեցէք ձեր շրջանային կամ նահանգային բաժնի ախտազերծման ծրագրին:

. Կապնւեցէք, Center for Diesease Control & Prevention (CDC)-ի հետ:
-Հեռաձայնեցէք **1-800-232-2522** (Անգլերէն)
-Հեռաձայնեցէք **1-800-232-0233** (Սպաներէնճ
-Այցելեցէք CDC-ի website-ը **www.cdc.gov/flu**

**U.S. DEPARTMENT OF HEALTH & HUMAN SERVICES**
**Centers for Disease Control and Prevention**
**National Immunization Program**

Inactivated Influenza Vaccine - Armenian 5/24/04
Translation provided by Los Angeles County Health Department